

No. 48330. European Communities and their Member States and Armenia

PARTNERSHIP AND COOPERATION AGREEMENT BETWEEN THE EUROPEAN COMMUNITIES AND THEIR MEMBER STATES, OF THE ONE PART, AND THE REPUBLIC OF ARMENIA, OF THE OTHER PART. LUXEMBOURG, 22 APRIL 1996 [*United Nations, Treaty Series, vol. 2733, I-48330.*]

PROTOCOL TO THE PARTNERSHIP AND COOPERATION AGREEMENT BETWEEN THE EUROPEAN COMMUNITIES AND THEIR MEMBER STATES, OF THE ONE PART, AND THE REPUBLIC OF ARMENIA, OF THE OTHER PART, TO TAKE ACCOUNT OF THE ACCESSION OF THE REPUBLIC OF BULGARIA AND ROMANIA TO THE EUROPEAN UNION. BRUSSELS, 27 JUNE 2007*

Entry into force: 1 April 2009, in accordance with article 4

Authentic texts: Armenian, Bulgarian, Czech, Danish, Dutch, English, Estonian, Finnish, French, German, Greek, Hungarian, Italian, Latvian, Lithuanian, Maltese, Polish, Portuguese, Romanian, Slovak, Slovene, Spanish and Swedish

Registration with the Secretariat of the United Nations: Council of the European Union, 1 March 2018

*No UNTS volume number has yet been determined for this record. The Text(s) reproduced below, if attached, are the authentic texts of the agreement /action attachment as submitted for registration and publication to the Secretariat. For ease of reference they were sequentially paginated. Translations, if attached, are not final and are provided for information only.

N° 48330. Communautés européennes et leurs États membres et Arménie

ACCORD DE PARTENARIAT ET DE COOPÉRATION ENTRE LES COMMUNAUTÉS EUROPÉENNES ET LEURS ÉTATS MEMBRES, D'UNE PART, ET LA RÉPUBLIQUE D'ARMÉNIE, D'AUTRE PART. LUXEMBOURG, 22 AVRIL 1996 [*Nations Unies, Recueil des Traités, vol. 2733, I-48330.*]

PROTOCOLE À L'ACCORD DE PARTENARIAT ET DE COOPÉRATION ENTRE LES COMMUNAUTÉS EUROPÉENNES ET LEURS ÉTATS MEMBRES, D'UNE PART, ET LA RÉPUBLIQUE D'ARMÉNIE, D'AUTRE PART, POUR TENIR COMPTE DE L'ADHÉSION DE LA RÉPUBLIQUE DE BULGARIE ET DE LA ROUMANIE À L'UNION EUROPÉENNE. BRUXELLES, 27 JUIN 2007*

Entrée en vigueur : 1^{er} avril 2009, conformément à l'article 4

Textes authentiques : arménien, bulgare, tchèque, danois, néerlandais, anglais, estonien, finnois, français, allemand, grec, hongrois, italien, letton, lituanien, maltais, polonais, portugais, roumain, slovaque, slovène, espagnol et suédois

Enregistrement auprès du Secrétariat de l'Organisation des Nations Unies : Conseil de l'Union européenne, 1^{er} mars 2018

*Aucun numéro de volume n'a encore été attribué à ce dossier. Les textes disponibles qui sont reproduits ci-dessous sont les textes originaux de l'accord ou de l'action tels que soumis pour enregistrement. Par souci de clarté, leurs pages ont été numérotées. Les traductions qui accompagnent ces textes ne sont pas définitives et sont fournies uniquement à titre d'information.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻ ԿՈՂՄԻՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՅՈՒՄ ԿՈՂՄԻՑ՝
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՒ ԳՐԱՆՑ ԱՆԴԱՄՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ (ԳՀՀ)

ԳՀՀ-ին Բուլղարիայի Հանրապետության և Ռումինիայի միանալու վերաբերյալ

Բելգիայի Թագավորությունը,
Բուլղարիայի Հանրապետությունը,
Չեխիայի Հանրապետությունը,
Դանիայի Թագավորությունը,
Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը,
Էստոնիայի Հանրապետությունը,
Հունաստանի Հանրապետությունը,
Իսպանիայի Թագավորությունը,
Ֆրանսիայի Հանրապետությունը,
Իռլանդիան,
Իտալիայի Հանրապետությունը,
Կիպրոսի Հանրապետությունը,
Լատվիայի Հանրապետությունը,
Լիտվայի Հանրապետությունը,
Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունը,
Հունգարիայի Հանրապետությունը,
Մալթայի Հանրապետությունը,
Նիդերլանդների Թագավորությունը,
Ավստրիայի Հանրապետությունը,
Լեհաստանի Հանրապետությունը,
Պորտուգալիայի Հանրապետությունը,
Ռումինիան,
Սլովենիայի Հանրապետությունը,
Սլովակիայի Հանրապետությունը,
Ֆինլանդիայի Հանրապետությունը,
Շվեդիայի Թագավորությունը,
Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը,

այսուհետ՝ Անդամ պետություններ, ներկայացված Եվրոպական միության
Խորհրդի կողմից, և Եվրոպական համայնքն ու Ատոմային Էներգիայի եվրոպական
համայնքը,

այսուհետ՝ Համայնքներ, ներկայացված Եվրոպական միության Խորհրդի և
Եվրոպական հանձնաժողովի կողմից՝ մի կողմից, և Հայաստանի Հանրապետությունը՝
մյուս կողմից, այսուհետ՝ Կողմեր, սույն Արձանագրության նպատակների համար,

նկատի ունենալով Բելգիայի Թագավորության, Չեխիայի Հանրապետության,
Դանիայի Թագավորության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Էստոնիայի
Հանրապետության, Հունաստանի Հանրապետության, Իսպանիայի Թագավորության,
Ֆրանսիայի Հանրապետության, Իռլանդիայի, Իտալիայի Հանրապետության, Կիպրոսի
Հանրապետության, Լատվիայի Հանրապետության, Լիտվայի Հանրապետության,
Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության, Հունգարիայի Հանրապետության, Մալթայի
Հանրապետության, Նիդերլանդների Թագավորության, Ավստրիայի Հանրապետության,

Լեհաստանի Հանրապետության, Պորտուգալիայի Հանրապետության, Սլովենիայի Հանրապետության, Սլովակիայի Հանրապետության, Ֆինլանդիայի Հանրապետության, Շվեդիայի Թագավորության, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության (Եվրոպական միության Անդամ պետությունները) և Բուլղարիայի Հանրապետության ու Ռումինիայի միջև՝ Բուլղարիայի Հանրապետության ու Ռումինիայի՝ Եվրոպական միությանը անդամակցելու մասին պայմանագրի դրույթները, որը ստորագրվել է 2005թ. ապրիլի 25-ին՝ Լյուքսեմբուրգում, և կիրառվելու է 2007թ. հունվարի 1-ից,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության հարաբերությունների նոր վիճակը, որն ի հայտ է գալու ԵՄ-ին երկու մոր անդամ պետությունների անդամակցությամբ, ինչը Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև համագործակցության համար քաջում է նոր հնարավորություններ և առաջ է բերում մարտահրավերներ,

հաշվի առնելով Կողմերի ցանկությունը՝ ապահովել ԳՀՀ-ի նպատակների և սկզբունքների ձեռքբերումը և իրականացումը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Բուլղարիայի Հանրապետությունը և Ռումինիան կլինեն Գործընկերության և համագործակցության համաձայնագրի Կողմեր, որով գործընկերություն է հաստատվում, մի կողմից, Եվրոպական համայնքների և նրանց Անդամ պետությունների, մյուս կողմից, Հայաստանի Հանրապետության միջև, որը ստորագրվել է 1996թ. ապրիլի 22-ին՝ Լյուքսեմբուրգում, և ուժի մեջ է մտել 1999թ. հուլիսի 1-ին (այսուհետ՝ Համաձայնագիր), և, համապատասխանաբար, կընդունեն և հաշվի կառնեն, այնպես, ինչպես մյուս Անդամ պետությունները, Համաձայնագրի տեքստը, ինչպես նաև Համատեղ հռչակագրերը, Նամակների փոխանակումները, միևնույն օրը ստորագրված Եզրափակիչ ակտին կցված՝ Հայաստանի Հանրապետության հայտարարությունը և Համաձայնագրի 2004թ. մայիսի 19-ի Արձանագրությունը, որն ուժի մեջ է մտել 2005թ. մայիսի 1-ին:

Հոդված 2

Սույն Արձանագրությունը կազմելու է Համաձայնագրի անքակտելի մասը:

Հոդված 3

1. Սույն Արձանագրությունը կհաստատվի Համայնքների կողմից, Անդամ պետությունների անունից՝ Եվրոպական միության խորհրդի կողմից և Հայաստանի Հանրապետության կողմից՝ իրենց ներքին ընթացակարգերին համապատասխան:

2. Կողմերը միմյանց կտեղեկացնեն նախորդ կետում նշված համապատասխան ընթացակարգերի ավարտի մասին: Հաստատման փաստաթղթերն ի պահ կհանձնվեն Եվրոպական միության Խորհրդի գլխավոր քարտուղարությանը:

Հոդված 4

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ կմտնի վերջին հաստատման փաստաթուղթն ի պահ տալու օրվան հաջորդող առաջին ամսվա առաջին օրը:

2. Մինչև սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրը այն կկիրառվի ժամանակավորապես՝ ուժի մեջ մտնելով 2007թ. հունվարի 1-ից:

Հոդված 5

1. Համաձայնագրի տեքստերը, Եզրափակիչ ակտը և դրան կցված բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև 2004թ. մայիսի 19-ի Համաձայնագրի Արձանագրությունները կազմվել են բուլղարերեն և ռումիներեն:

2. Դրանք կցված են սույն Արձանագրությանը և հավասարազոր են այլ լեզուներով տեքստերին, որոնցով կազմված են Համաձայնագիրը, Եզրափակիչ ակտը և դրան կցված բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև 2004թ. մայիսի 19-ի Համաձայնագրի Արձանագրությունները:

Հոդված 6

Սույն Արձանագրությունը կազմված է երկու բնօրինակով՝ բուլղարերեն, չեխերեն, դանիերեն, հոլանդերեն, անգլերեն, էստոներեն, ֆիններեն, ֆրանսերեն, գերմաներեն, հունարեն, հունգարերեն, իտալերեն, լատիշերեն, լիտվերեն, մալթայերեն, լեհերեն, պորտուգալերեն, ռումիներեն, սլովեններեն, սլովակերեն, իսպաներեն, շվեդերեն և հայերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

PROTOCOL
TO THE PARTNERSHIP AND COOPERATION AGREEMENT
BETWEEN THE EUROPEAN COMMUNITIES
AND THEIR MEMBER STATES, OF THE ONE PART,
AND THE REPUBLIC OF ARMENIA, OF THE OTHER PART,
TO TAKE ACCOUNT OF THE ACCESSION OF THE REPUBLIC OF BULGARIA
AND ROMANIA TO THE EUROPEAN UNION